



*Կալիֆորնիայի հաշմանդամների պաշտպանության և իրավունքների
պաշտպանության համակարգ
Անվճար հեռախոսահամար՝ (800) 776-5746*

Ձեր նորածնի և մանկիկի իրավունքները (0-3 տարեկան)՝ "Վաղ մեկնարկում" ծրագրի շրջանակում տարածքային կենտրոնի կողմից Ձեր մայրենի լեզվով տեղեկատվություն և ծառայություններ ստանալու համար

Ապրիլ 2016թ., Հր. #F100.10

Այս տեղեկատվական թերթիկը Ձեզ տեղեկություններ կտրամադրի տարածաշրջանի տարածային կենտրոնից "Վաղ մեկնարկում" ծրագրի շրջանակում զարգացման հնարավոր խանգարումներ ունեցող նորածինների և մինչև 3 տարեկան երեխաների համար Ձեր մայրենի լեզվով տեղեկատվություն և ծառայություններ ստանալու Ձեր իրավունքների մասին: 3 տարեկան և բարձր տարիքի երեխաներին տրամադրվող ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության համար տե՛ս մեր **"3 տարեկան և բարձր տարիքի երեխաների համար տարածքային կենտրոնից Ձեր մայրենի լեզվով տեղեկատվություն և ծառայություններ ստանալու Ձեր իրավունքները"** հրապարակումը հետևյալ հղումով. <http://www.disabilityrightscalifornia.org/pubs/F10101.pdf>.

Էջ 2` 7-ից

Կալիֆորնիայի Senate Bill (SB) 555 (Correa) կոչվող օրենքը սահմանում է "Վաղ մեկնարկում" ծրագրի շրջանակում Ձեր մայրենի լեզվով տեղեկատվության և ծառայությունների տրամադրման տարածքային կենտրոնի պարտավորությունը: Օրենքը կարող էք գտնել այստեղ. http://www.leginfo.ca.gov/pub/13-14/bill/sen/sb_0551-0600/sb_555_bill_20131009_chaptered.pdf

Տարածքային կենտրոններից ծառայություններ ստացող որոշ մարդիկ անգլերեն չեն խոսում կամ ունեն անգլերեն խոսելու կամ հասկանալու սահմանափակ կարողություններ: Տարածքային կենտրոնից Ձեզ կամ Ձեր նորաձին/մանկիկին անհրաժեշտ ծառայությունը ստանալու համար չի պահանջվում, որ Դուք խոսեք, կարդաք կամ գրեք անգլերեն: Այս օրենքն օգնում է համոզված լինել, որ անգլերեն չխոսող կամ խոսելու սահմանափակ կարողություններ ունեցող սպառողները և նրանց ընտանիքներն ունեն հավասարաչափ տեղեկատվություն տարածքային կենտրոնի ծառայությունների և աջակցության մասին:

1. Ո՞րն է համարվում "մայրենի լեզուն":

"Վաղ մեկնարկում" ծրագրի շրջանակում "մայրենի լեզուն" այն լեզուն է, որով սովորաբար խոսում են երեխայի ծնողները: 34 C.F.R. sec. 303.25(a); Cal. Gov. Code sec. 95020(g)(1): Օրինակ, եթե Դուք ունեք անգլերեն խոսելու սահմանափակ կարողություններ, իսկ սովորաբար խոսում եք իսպաներեն, ապա Ձեր մայրենի լեզուն իսպաներենն է:

2. Ի՞նչ կպատահի, եթե ես խուլ եմ կամ ունեմ լսողություն խնդիրներ, կույր եմ կամ ունեմ տեսողության խնդիրներ: Ի՞նչ է ինձ համար նշանակում մայրենի լեզու "Վաղ մեկնարկում" ծրագրի շրջանակում:

Եթե Դուք խուլ եք կամ ունեք լսողության խնդիրներ, կույր եք կամ ունեք տեսողության խնդիրներ, "մայրենի լեզուն" նշանակում է հաղորդակցման այն ձևը, որը Դուք սովորաբար օգտագործում եք: Դա կարող է լինել, օրինակ՝ նշաններով խոսելու լեզուն, Բրայլյան

Էջ 3՝ 7-ից

լեզուն կամ բանավոր հաղորդակցումը: 34 C.F.R. sec. 303.25(b); Cal. Gov. Code sec. 95020(g)(1):

3. Եթե իմ երեխան գնահատվել և որակավորվել է "Վաղ մեկնարկում" ծրագրին մասնակցելու համար կամ "Վաղ մեկնարկում" ծրագրի ծառայությունները ստանալու համար, ես իրավումք ունե՞մ անցնելու գնահատումն ու որակավորումը մայրենի լեզվով:

Այո: Գնահատումներն ու որակավորումները պետք է կատարվեն Ձեր մայրենի լեզվով, քանի դեռ տարածքային կենտրոնը չի ներկայացրել, որ դա անելն ակնհայտորեն անհնար է: 34 C.F.R. sec. 303.321(a)(5); Cal. Gov. Code sec. 95020(g)(1): Եթե Ձեր մայրենի լեզուն վիետնամերենն է, տարածքային կենտրոնը պետք է գնահատումն ու որակավորումն իրականացնի վիետնամերենով: Այս որակավորումը, համապատասխանության որոշման համար հանդիպումը և Ընտանիքի ծառայության անհատական ծրագրի (Individualized Family Service Plan - IFSP) կազմման նախնական հանդիպումը պետք է անցկացվեն Ձեր մայրենի լեզվով՝ նյութերը տարածքային կենտրոնին հղելուց հետո 45 օրվա ընթացքում: 34 C.F.R. sec. 303.310; Cal. Gov. Code sec. 95020(b):

4. Ի՞նչ կասեք ընտանեկան որակավորումների մասին: Արդյո՞ք ընտանիքի որակավորումը պետք է կատարվի որակավորում անցնող ընտանիքի անդամի մայրենի լեզվով:

Այո: Ընտանիքի ցանկացած անդամի որակավորումը, որպես ընտանիքի որակավորման մաս, պետք է կատարվի ընտանիքի տվյալ անդամի մայրենի լեզվով, քանի դեռ տարածքային կենտրոնը չի ներկայացրել, որ դա անելն ակնհայտորեն անհնար է: 34 C.F.R. sections 303.321(a)(6), 303.25; Cal. Gov. Code sec. 95020(g)(1):

5. Ի՞նչ կասեք IFSP հանդիպումների մասին: Դրանք պե՞տք է անցկացվեն իմ մայրենի լեզվով:

Էջ 4՝ 7-ից

Այո: Դուք իրավունք ունեք IFSP-ի կազմման գործընթացը և IFSP հանդիպումն ունենալ Ձեր ընտանիքի մայրենի լեզվով, քանի դեռ տարածքային կենտրոնը չի ներկայացրել, որ դա անելն ակնհայտորեն անհնար է: 34 C.F.R. sec. 303.342; Cal. Gov. Code sec. 95020(g)(1): IFSP-ն պետք է վերանայվի յուրաքանչյուր վեց ամիսը մեկ կամ անհրաժեշտության դեպքում՝ ավելի հաճախ: 34 C.F.R. sec. 303.342(b); 17 C.C.R. sec. 52102(b):

6. Կարո՞ղ եմ IFSP-ի կրկնօրինակն ունենալ իմ մայրենի լեզվով:

Տարածքային կենտրոնը պետք է Ձեր մայրենի լեզվով ամբողջությամբ բացատրի Ձեզ, թե ինչ է IFSP-ն: 34 C.F.R. sec. 303.342(e):

Տարածքային կենտրոնը պետք է Ձեզ տրամադրի նաև IFSP-ի կրկնօրինակը Ձեր մայրենի լեզվով, քանի դեռ Չարգացման խանգարումներ ունեցող մարդկանց սոց.ապահովության վարչությունը (Department of Developmental Services - DDS) չի սահմանել, որ դա անելը տարածքային կենտրոնի համար անհաղթահարելի դժվարություն է ներկայացնում: Cal. Gov. Code sec. 95020(g)(1); 22 C.C.R. sections 98210-98211:

7. Որքա՞ն արագ ես կարող եմ ստանալ IFSP-ի կրկնօրինակն իմ մայրենի լեզվով:

Ողջամիտ ժամանակահատվածում, քանի դեռ DDS-ը չի ասել, որ դա մեծ ծանրաբեռնում է տարածքային կենտրոնի համար: Cal. Govt. Code sec. 95020(g)(1); 22 CCR sections 98210-98211: Դուք հնարավոր է կարողանաք ստանալ թարգմանված IFSP-ն ավելի շուտ, եթե տարածքային կենտրոնին հուշում ուղարկեք, որ որքան շուտ Դուք ստանաք թարգմանված IFSP-ն, այնքան շուտ կարող եք տալ Ձեր համաձայնությունը ծառայությունների համար և այդքան շուտ Ձեր երեխան կկարողանա ստանալ ծառայությունները: Արդյունքում՝ որքան արագ Ձեր երեխան ստանա իր վիճակ(ներ)ը բարելավող ծառայություններ, այնքան շատ ժամանակ կլինի

Էջ 5՝ 7-ից

դրական արդյունք ստանալու համար: Այսինքն, Դուք կարող եք տալ Ձեր համաձայնությունը ծառայություններ ստանալու համար, որքան արագ Ձեր երեխան կարողանա ստանալ ծառայությունները և որքան վաղ Ձեր երեխան ստանա իր վիճակ(ներ)ը բարելավող ծառայությունները, այնքան ավելի շատ ժամանակ կլինի դրական արդյունք ստանալու համար:

8. Արդյո՞ք տարածքային կենտրոնը պետք է նշի IFSP-ում, թե որն է իմ մայրենի լեզուն:

Այո: Տարածքային կենտրոնը պետք է IFSP-ում նշի, թե որն է Ձեր մայրենի լեզուն: Cal. Gov. Code sec. 95020(g)(2): Եթե Դուք սովորաբար խոսում եք օրինակ կորեերեն, ապա Ձեր IFSP-ում պետք է նշվի, որ Ձեր մայրենի լեզուն կորեերենն է:

9. Ի՞նչ պետք է անեմ, եթե տարածքային կենտրոնը չի նշել իմ մայրենի լեզուն կամ գնահատումը, որակավորումը կամ պլանավորման գործընթացը չի անցկացնում իմ մայրենի լեզվով:

Եթե Ձեր տարածքային կենտրոնը չի նշել Ձեր մայրենի լեզուն կամ գնահատումը, որակավորումը կամ պլանավորման գործընթացը չի անցկացնում Ձեր մայրենի լեզվով, Դուք կարող եք բողոք ներկայացնել: 17 C.C.R. sec. 52170: "Վաղ մեկնարկում" ծրագրի շրջանակում բողոք ներկայացնելու համար ուղարկեք համառոտ նամակ հետևյալ հասցեով.

California Department of Developmental Services (DDS)
Office of Human Rights and Advocacy Services
Ում՝ Early Start Complaint Unit
1600 Ninth Street, Room 240, M.S.-215
Sacramento, CA 95814

Ձեր նամակը պետք է ներառի Ձեր անունը, հասցեն, հեռախոսահամարը և տեղեկատվություն այն մասին, թե ինչ է պատահել, ինչ եք Դուք փորձել անել խնդիրը լուծելու համար,

ներգրավված բոլոր անձանց անունները և ինչպես շտկել պատահածը: Ձեր բողոքը կարող եք ներկայացնել Ձեր մայրենի լեզվով: Եթե Դուք ի վիճակի չեք գրել Ձեր բողոքը, Ձեր երեխայի ծառայության համակարգողը պետք է օգնի Ձեզ: Դուք կարող եք օգտագործել նաև DDS-ի կայքէջում գետեղված ձևաթուղթը.

<http://www.dds.ca.gov/Forms/docs/DS1827.pdf>.

Բողոքը ստանալուց հետո 60 օրվա ընթացքում DDS-ը պետք է ուսումնասիրի, Ձեզ տա լրացուցիչ տեղեկատվություն տրամադրելու հնարավորություն, վերանայի տեղեկատվությունը, սահմանի՝ արդյոք կա օրենքների խախտում և ներկայացնի գրավոր որոշում: Գրավոր որոշումը պետք է ներառի տվյալներ, եզրակացություններ, պատճառներ և պահանջվող բոլոր շտկիչ գործողությունները, շտկիչ գործողությունների ժամանակայնությունը և առաջարկի տեխնիկական աջակցություն սխալը կատարած գործակալությանը: 17 C.C.R. sec. 52171:

Այս գործընթացի մասին մանրամասն տվեղեկատվությունը տե՛ս մեր Կրթական իրավունքների ու պատասխանատվությունների հատուկ ձեռնարկի գլուխ 12-ի հարց 27-ում հետևյալ հղմամբ.

<http://www.disabilityrightsca.org/pubs/504001Ch12.pdf>

Բողոք ներկայացնելու փոխարեն Դուք կարող եք ներկայացնել հայց անկողմնակալ լսումների համար:

http://www.dds.ca.gov/Complaints/compl_t_esdueprocess.cfm էջում գետեղված Լսումների դիմումաձևի օգտագործմամբ անկողմնակալ լսումների հայտը ներկայացնելուց հետո Ձեզ շատ արագ կողարկվի լսումների ամսաթիվը: Նախքան լսումների հայտ ներկայացնելը Դուք պետք է պատրաստված լինեք: Լսումներն անցկացվում են վարչական հարցերով դատավորի ներկայությամբ: Տարածքային կենտրոնը ներկայացնում է ապացույցներ և վկաներ, այնուհետև՝ Դուք: Լսումների գրավոր որոշումը պետք է կայացվի վարչական հարցերով դատավոր կողմից լսումների Ձեր հայցը ներկայացնելուց հետո 30 օրվա ընթացքում: Լսումների վերաբերյալ ընդհանուր տեղեկատվությունը տե՛ս

Էջ 7` 7-ից

http://www.dds.ca.gov/Complaints/compl_esdueprocess.cfm և
<http://www.disabilityrightsca.org/pubs/548401.pdf>.

*Կալիֆորնիայի հաշմանդամների իրավունքներով զբաղվող
կազմակերպությունը ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից,
հովանավորների ամբողջական ցանկը տե՛ս՝*

[http://www.disabilityrightsca.org/
Documents/ListofGrantsAndContracts.html](http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html).